

**ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐՈՒՄ (VI-VII դդ.)**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա. Մ.

*Մդ. ընթացքում Այսրկովկասում ծավալված հակապարսկական ապստամբություններն ընդհանուր առմամբ չունեցան այն հետևանքները, ինչ ակնկալում էին տարածաշրջանի ժողովուրդները, և Պարսկաստանը վերստին շարունակեց տեր ու տնօրինություն անել Այսրկովկասում:*

*Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցիչ Վաչագան Գ Բարեպաշտի մահից հետո՝ պարսից արքունիքը տեղական ներկայացուցիչների փոխարեն Աղվանքում կառավարիչներ է նշանակում արդեն պարսիկ պաշտոնյաների: Առաջ անցնելով նշենք, որ այդ քաղաքականությունը հանգեցրեց Ուտիքի և Արցախի աստիճանական առանձնացմանը, որի հետևանքով Աղվանից մարզպանությունը տրոհվեց և քայքայվեց: Դրան նպաստեցին թե՛ պարսիկների վարած քաղաքականությունը, թե՛ խազարական արշավանքները, թե՛ պարսկաբյուզանդական պատերազմները, որոնք փոքր ընդմիջումներով շարունակվեցին ամբողջ VI դարում և այնքան թուլացրին երկու պետությունները, որ նրանք ի վիճակի չէղան դիմագրավելու արաբական արշավանքներին:*

*Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 516 թ. Այսրկովկաս ներխուժեցին խազարները (հոն – սաբիտները). «Թագաւորն Ռոսմոսոքեան իւրովք զօրօքն և Թոբէլական գնդին գումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս կոյս Կուրական գետոյն՝ տարածեալ յՈւտիացւոց գաւառն: Եւ ածեալ նստուցանէր զղակիշն իւր մերձ ի Խաղիսաղն քաղաք: Եւ անդէն բովանդակեալ գումարէր ի ձեռս նոցա զմեռասան զօրացն բազմութիւնս և հրամայէր յերիս առաջս առնել՝ ասպատակել ի վերայ աշխարհին Աղուանից, Հայոց և Վրաց»<sup>2</sup>: Արևելյան Այսրկովկասը ենթարկվում է ավերի ու թալանի: Այս արշավանքը հարված հասցրեց Պարսկաստանի*

---

<sup>1</sup> Վաչագան Բարեպաշտը մահացել է 510 թ., Բարկուշատում, կասկածելի հանգամանքներում (տե՛ս Պատմություն նահանգին Միսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 86): Բուն Աղվանքում 461 թ. Վաչե Բ-ի գահազրկումից որոշ ժամանակ հետո նորից վերականգնվեց թագավորական իշխանությունը: 481-484 թթ. հաղթականորեն ավարտված հայոց ապստամբությունը վճռական նշանակություն ունեցավ այսրկովկասյան երեք երկրրների համար: Դրա հետևանքով, հայոց մարզպանի պաշտոնը ստացավ Վահան Մամիկոնյանը, իսկ բուն Աղվանքում իշխանության գլուխ անցավ Վաչագան Բարեպաշտ Արշակունին: Ըստ Ա. Հակոբյանի՝ Վաչագան Բարեպաշտը կառավարել է 38 տարի (485-523 թթ.) [տե՛ս **Յակոբեան Ա.**, «Վաչագան վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Չ դարերի Աղուանքում (Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 2003, N 1-12, էջ 119-120)]: Բայց, ինչպէս հայտնի է, Վաչագան Բարեպաշտի մահից հետո Աղվանքում նորից հաստատվում է մարզպանական համակարգը:

<sup>2</sup> **Մովսես Կաղանկատուացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բրնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Ե., 1983, էջ 99:

հեղինակությանը: Պարսից արքա Կավատը (488-531 թթ.) ստիպված էր պատերազմի էլնել խազարների դեմ, և, Բալազորիի տեղեկության համաձայն, «Պարսկական բանակը մտավ Առանի մարզը և գրավեց Ար-Ռաս (Արաքս - Վ. Ա.) գետի ու Շիրվանի միջև ընկած ողջ տարածությունը»<sup>3</sup>:

Պատերազմական գործողություններին զուգահեռ, պարսիկներն ամրացնում են Աղվանքի՝ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերը՝ խազարների կողմից ազատագրված տարածքներում զանազան ամրություններ կառուցելով<sup>4</sup>: Պարսկական բանակը այնուհետև շարժվում է դեպի հյուսիս՝ դուրս մղելով խազարներին արևելյան Այսրկովկասից: Նվաճված երկրամասերը միավորվում են Աղվանից մարզպանության հետ: Բնչպես նկատել են ուսումնասիրողները, «Ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, բացառիկ նշանակություն է ձեռք բերում Աղվանից մարզպանությունը, որի վրայով էին անցնում նրանց՝ դեպի Պարսկաստանի խորքերը տանող արշավուղիները»<sup>5</sup>: Կավատին հաջորդած Խոսրով Ա Անուշիրվանը (531-578 թթ.) ուշադրությունը սևեռում է խազարական արշավանքները կասեցնելուն և Կովկասյան լեռնանցքներն ամրապնդելուն: Կասպից ծովի արևմտյան ափին մի շարք քաղաքներ ու ամրություններ կառուցելուց հետո Խոսրով Ա-ն հրամայեց կառուցել նաև Դերբենդի պարիսպները. «Այս Խոսրովի ժամանակս իւրոյ թագաւորութեանն կապեաց զՊահակն Ճորայ և Աղուանից...»<sup>6</sup>: Չբավարարվելով ձեռք բերածով՝ արքայից արքան Կասպից ծովի մերձակա շրջանները բնակեցնում է տարբեր ժողովուրդներով սահմանափակ շրջաններում հուսալի հենարան ունենալու համար: Նրանց տրվում են բազմաթիվ արտոնություններ:

Կասպից ծովի մերձակա շրջաններում բնակեցված ցեղերը միմյանց հետ հաղորդակցվում էին թարգմանչի միջոցով<sup>7</sup>: Ժամանակի ընթացքում դրանք հանդես են գալիս որպես ինքնուրույն իշխանություններ՝ տարբեր անվանումներով, և «Աղվանք» աշխարհագրական անվանումը այդ տարածքի համար շուտով դադարում է գործածական լինել Կուրի ձախափնյակում: Մակայն Կուրի աջափնյակում՝ Ուտիքում և Արցախում, կազմավորվում է Առանշահիկների հայկական իշխանությունը՝ էթնիկապես միատարր բնակչությամբ:

Այսպիսով՝ Աղվանից մարզպանությունը, որն ստեղծվել էր 461 թ.<sup>8</sup> և հանդես էր գալիս «Աղուանք» անունով, դադարեց գոյություն ունենալ, և այդ անունով սկսում են հանդես գալ Կուրի և Արաքսի միջազգեստքում գտնվող հայկական գավառները:

<sup>3</sup> Баладзоря, Книга завоевания стран, перевод Жузе П., Баку, 1927, с. 6.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 216:

<sup>6</sup> Պատմութիւն Սեբեոսի (այսուհետև՝ Սեբեոս), աշխատասիրությամբ Գ. Արզարյանի, Ե., 1979, էջ 69:

<sup>7</sup> Նույն տեղում, с. 13, вып. 31, с. 33.

<sup>8</sup> Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանից մարզպանության կազմավորումը, [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2010, N 1-2, էջ 101-106]:

Բյուզանդացիների օգնությամբ գահ բարձրացած Խոսրով Բ Փարվեզը (590-628 թթ.) իր դեմ բռնկված ապստամբության մասնակիցներից վրեժխնդիր եղավ: Այդ սպանողից ազատվեց Միհրան անունով մեկը, որն իբր թե 30 հազար ընտանիքով հեռանում է Պարսկաստանից՝ խազարների մոտ անցնելու նպատակով<sup>9</sup>: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ հետագա գլխացավանքից ազատվելու համար Խոսրովը Միհրանին ուղարկում է մի գրություն՝ առաջարկելով իր բարեկամությունը և բնակության վայր ընտրելու իրավունք է տալիս: Միհրանն այդ ժամանակ հասած է լինում. «ի ստորոտն գաւառին Գարդմանայ»<sup>10</sup>: Միհրանյան տոհմի ծագումնաբանության մասին ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ<sup>11</sup>: Մենք համամիտ ենք այն ուսումնասիրողների տեսակետներին, որոնք չափազանցություն են համարում 30 հազար ընտանիքի գաղթը<sup>12</sup>, որը համեստ հաշվակներով կազմում է մոտ 120 հազար բնակչություն: Այդքան հոծ բազմության գաղթը տևական ժամանակ կպահանջեր, և պարսից աշխարհակալ արքան, եթե չունենար այլ նպատակ, կարող էր արգելել իր երկրի բնակչության մի ստվար հատվածի՝ թշնամու կողմն անցնելը: Դա երկրի համար ևս կունենար ծանր հետևանքներ, քանի որ միջնադարում բնակչությունը կազմում էր պետության հզորության հիմքը: Հետևաբար, Գարդմանում ապաստանած գաղթականությունը, մեր կարծիքով, եկել էր հատուկ նպատակով և ոչ թե պարսից արքունիքից ունեցած դժգոհության պատճառով: Իրավացի են այն ուսումնասիրողները, որոնք գտնում են, որ Խոսրով Փարվեզն, ունենալով հեռուն գնացող նպատակներ, փորձում էր տարածաշրջանում ուժեղացնել պարսկական տարրը<sup>13</sup>, քանի որ 591 թ., Հայաստանի երկրորդ բաժանումից հետո Ուտիքը ձեռք բերեց ռազմավարական կարևոր նշանակություն, և պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմներում պարսկական զորաբանակն օգնություն կստանար Ուտիքում հաստատված «փախստականներից»:

Երբ 624 թ. պարսիկները ներխուժեցին Ուտիք՝ բյուզանդացիների դեմ ճակատամարտ տալու համար, «Պարսից զորաբանակներն այստեղ հանդիպեցին ոչ թե իրենց թագավորից փախածների թշնամությանը, այլ նրանց իջևանած Գարդմանքը դարձրին կարևորագույն հենակետ՝ բյուզանդացիների դեմ վճռական ճակատամարտի նետվելու համար»<sup>14</sup>:

Հաստատվելով Գարդմանում՝ Միհրանը և նրա հաջորդներն ամեն ինչ անում էին գավառի հայկական իշխանությունը վերացնելու համար: Միհրանյան տոհմից «Քաջ»

<sup>9</sup> Կաղանկատուացի, էջ 171:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս Սվազյան Հ., Աղվանքը և Միհրանյան տոհմը (Լրաբեր, 1980, N 9, էջ 91-101):

<sup>12</sup> Тревел К. Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., М.-Л., 1959, с. 235-236.

Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981, էջ 235:

<sup>13</sup> Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 229:

<sup>14</sup> Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 236:

Վարդանը նենգությամբ կոտորում է հայկական իշխանական տան անդամներին<sup>15</sup>: Սակայն, զգալով որ, չնայած ձեռնարկվող քայլերին, իրենք չեն կարողանում տիրապետող դիրք գրավել հայկական միջավայրում, ընդունում է քրիստոնեություն<sup>16</sup>: Դրանից հետո արդեն նրանց իշխանությունն աստիճանաբար սկսում է տարածվել հայկական հարևան գավառներում:

Այսպիսով, «ամրապնդվելով» Ուտիքի Գարդման գավառում՝ Միհրանյանները փոխարինելու եկան նրա նախկին բուն հայկական նախարարական տանը<sup>17</sup>: Վիճակն այսպիսին էր այժմ արդեն «Աղվանք» կոչվող երկրամասում VI դ. վերջին և VII դ. սկզբին, երբ մի վերջին անգամ, նախարարական արշավանքների շրջանում, երկու աշխարհակալությունները՝ Պարսկաստանը և Բյուզանդիան բախվեցին միմյանց: «Արևելքի առյուծը»<sup>18</sup>, ինչպես Խոսրովին անվանում է Մովսես Կաղանկատվացին, մի քանի խոշոր ճակատամարտերում ջախջախեց բյուզանդական բանակները և կործանման եզրին հասցրեց հազարամյա կայսրությունը:

Նոր գահ բարձրացած Հերակլ կայսրը (610-642) սկզբնական շրջանում չի կարողանում կասեցնել սասանյան աշխարհակալին: Սակայն վիճակը փոխվում է 622 թ.՝ Հերակլի հայտնի արշավանքով<sup>19</sup>: Պատերազմական գործողությունների ռազմաբեմ է դառնում Այսրկովկասը՝ մասնավորապես Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերը. դա հետագայում ողբերգական հետևանքներ ունեցավ տեղի բնակչության համար: Հերակլը, որը կարողացել էր առավելության հասնել պարսիկների նկատմամբ, 624 թ. մնում է ձմեռելու «...ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց»<sup>20</sup>: Պատրաստվելով գարնանը սկսվելիք ռազմական գործողություններին՝ կայսրը սպառնալիքներով փորձում է իր բանակը համարել տեղական ռազմական ուժերով: Սակայն այդ երկրներն ավելի շատ հակված էին Պարսկաստանի կողմը և ոչնչով չեն օգնում կայսերական բանակին՝ զգուշանալով պարսից տիրակալից: Աղվանների՝ ռազմական գործողություններին մասնակցելու մասին տեղեկություններ չկան, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել են ուսումնասիրողները, եթե Աղվանից երկրի իշխանները մերժել են Հերակլին օգնություն ցույց տալ, ապա պատերազմական գործողություններին

<sup>15</sup> Կաղանկատուացի, էջ 172:

<sup>16</sup> Նույն տեղում, Գ, էջ 339:

<sup>17</sup> Ղաթալյոզյան Ա., Գարդման, Ե., 2009, էջ 31: Պետք է նկատել, որ Առանշահիկների ու Միհրանյանների տիրապետությունը չի տարածվել միայն Արաքս գետից մինչև Գովկասյան լեռները: Այդ առումով իրավացի է Բ. Ուլուբաբյանը՝ նշելով, որ հայ իշխանների տիրապետության տակ եղած Աղվանից աշխարհը Հայոց Արևելից կողմանց երկու նահանգներն էին հյուսիսում՝ Գուր գետի սահմանով և Կամբեճան գավառի ընդգրկումով (Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 246): Կամբեճան գավառի առնչությամբ հեղինակները հիմնականում հիմնվում են Մովսես Կաղանկատվացու տեղեկության վրա. «... իւր սահմանս յայնկոյս գետոյն Գուրայ ի Կապիճանն գաւառ» (Կաղանկատուացի, էջ 178):

<sup>18</sup> Կաղանկատուացի, էջ 146:

<sup>19</sup> Տե՛ս Թեոփանես Խոստովանող, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Ե., 1983, էջ 18-37:

<sup>20</sup> Կաղանկատուացի, էջ 132:

մասնակցել են պարսիկների կողմում, քանի որ Աղվանից իշխանության գլուխ կանգնած էին պարսկական ծագում ունեցող Միհրանյանները<sup>21</sup>:

Սկսված պատերազմում թե՛ Հերակլ կայսրը և թե՛ Խոսրով Փարվեզը փնտրում էին դաշնակիցներ, և կայսրին հաջողվում է մեծամեծ խոստումներով խազարներին գրավել իր կողմը<sup>22</sup>: Հերակլի հրավերին արձագանքած հյուսիսային ցեղերի առաջին արշավանքն Այսրկովկաս տեղի է ունեցել 627 թ.: Խազարական ահռելի բանակը, Ջերուխաքանի գլխավորությամբ ճեղքելով Ճորա պահակը, ներխուժեց Այսրկովկաս: Մովսես Կաղանկատվացին սարսափելի գույներով է նկարագրում խազարների արշավանքները՝ ժողովրդի սպանող, գերեվարությունը և թալանը<sup>23</sup>: Ավարառու ցեղերի արշավանքը կրկնվեց 628 թ.: Այս անգամ նույնպես առաջին հարվածն իր վրա ընդունեց Աղվանից աշխարհը: Նշենք, որ ինչքան թուլանում էր Պարսկաստանը, այնքան խազարներն ավելի մեծ տարածքներ էին անպատիժ ասպատակում: Դիմադրության թույլ փորձ կատարվեց Պարտավում՝ բերդում կենտրոնացնելով շրջակայքի բնակչությանը<sup>24</sup>: Սակայն խազարները գրավում են քաղաքը և կոտորում բնակչության մեծ մասին:

Խազարական հորդան այնուհետև պաշարում է Տփղիսը, սակայն հաջողության չի հասնում: Քաղաքի պաշտպանները մեծ ճիգերի գնով կարողացան պաշտպանվել՝ գիտենալով, թե ինչ է սպասվում իրենց, եթե խազարները մտնեն քաղաք: Այսպիսին էր վիճակը Այսրկովկասում, երբ պարսկական արքունիքում կատարվեցին այնպիսի իրադարձություններ, որոնք որոշ ժանամակ անց պետք է դառնային մի քանի հարյուրամյակ կառավարող Սասանյան դինաստիայի կործանման պատճառը: 628 թ. հեղաշրջման հետևանքով, ոչ միայն գահից, այլև կյանքից զրկվեց Իրանի փառքը՝ աշխարհակալ Խոսրով Փարվեզը<sup>25</sup>: Մովսես Կաղանկատվացին մի ամբողջ գլուխ է նվիրել արյաց արքայի սպանության հանգամանքներին<sup>26</sup>: Նոր գահ բարձրացած Կավատը հաշտություն խնդրեց, Հերակլը չմերժեց նրա խնդրանքը: Թվում էր, թե տարածաշրջանում խաղաղություն հաստատվեց: Սակայն չբավարարվելով նախորդ արշավանքների հարուստ ավարով՝ խազարները 629 թ. երրորդ անգամ ներխուժեցին Այսրկովկաս՝ պաշարելով Տփղիսը: Քաղաքը գրավվում է և ենթարկվում ավերածությունների: Ապա ավարառու հորդան Խաքանի որդու՝ Շաթի գլխավորությամբ շարժվում է Ուտիքի և Արցախ կողմերը, որն աղբյուրներում նշված է «Աղվանք» անունով: Աղվանից կաթողիկոս Վիրոն ամբողջ ժողովրդի կողմից հպատակություն է հայտնում խազարների առաջնորդին<sup>27</sup>: Կաթողիկոսին են վերադարձնում

<sup>21</sup> Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 234:

<sup>22</sup> Կաղանկատուացի, էջ 141:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 140-146:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>25</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967, էջ 253:

<sup>26</sup> Կաղանկատուացի, էջ 146-149

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 161-162:

գերիներին<sup>28</sup>, իսկ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններն ընկնում են խազարների տիրապետության տակ:

Թեպետ Պարսկաստանը գնում էր դեպի կործանում, սակայն տարածաշրջանում պահպանում էր որոշ ազդեցություն և Ուտիքում ու Արցախում իշխանությունը հանձնում է իրեն հավատարիմ Միհրանյան տոհմից Վարազ-Գրիգորին, որը դառնում է «գառաջին իշխանն Աղուանից»<sup>29</sup>: Նրա հաջորդի՝ Ջուանշիրի (642-683 թթ.)<sup>30</sup> օրոք կատարվեցին իրադարձություններ, որոնք եկան փոխելու Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրությունը: 630-ական թվականներին առաջացած արաբական խալիֆայությունը լայնածավալ նվաճումներ կատարեց և շուտով դարձավ աշխարհի հզոր տերություններից մեկը: Արաբներն իրենց առաջին հարվածն ուղղեցին սասանյան տերության դեմ: Որպես հպատակ երկրներ՝ Այսրկովկասի զինական ուժերը կանչվեցին Տիգրոն: Այստեղ Ջուանշիրին ներկայացնում են Հազկերտ Գ-ին, և վերջինս նրան կարգում է «սպարապետն Աղուանից»<sup>31</sup>:

Կարծում ենք՝ Ջուանշիրը Քաղեսիայի 637 թ. հունվարի 6-ի ճակատամարտում կռվել է Մուշեղ Մամիկոնյանի՝ «...որդի Դաւթի, զաւրավարն Հայոց...»<sup>32</sup>, հրամանատարությամբ՝ գլխավորելով զորաբաժին: Ջուանշիրը մեծ քաջությամբ է կռվում Սասանյանների համար այդ բախտորոշ ճակատամարտում, սակայն պարսիկները պարտություն են կրում, իսկ օգնության եկած զորքերը հեռանում են<sup>33</sup>: Ջուանշիրը մնում է և երեք հազարանոց զորաբաժնով մասնակցում 642 թ. Նեհավենդի ճակատամարտին<sup>34</sup>: Ի տարբերություն Քաղեսիայի ճակատամարտի, երբ Ջուանշիրը հայոց ընդհանուր զորաբանակի շարքում կռվում էր Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարության ներքո, Նեհավենդի ճակատամարտում, հավանական է, որ ինքն էր Այսրկովկասից Պարսկաստան գնացած զորաբանակի հրամանատարը: Մանավանդ որ տարածաշրջանի մյուս իշխողներն արդեն չէին հավատում պարսիկների հաջողությանը և գերադասում էին չեզոքություն պահպանել:

642 թ. անցնելով իշխանության գլուխ՝ Ջուանշիրը Գարդմանից տեղափոխվում է Պերոզապատ (Պարտավ)<sup>35</sup>, որը վերստին դառնում է Հայոց Արևելից կողմերի վարչական կենտրոնը:

Մերձավոր Արևելքում հաստատված արաբները չէին կարող այքաթող անել տարածաշրջանը և 642-643 թթ. արշավում են Հայաստանի արևելյան շրջանները<sup>36</sup>: Ջուանշիրն այդ ժամանակ արտաքին քաղաքականության հետ կապված իր քայլերը

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>30</sup> Մվազյան Հ., Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ (Լրաբեր, 1973, N 11, էջ 112):

<sup>31</sup> Գաղանկատուացի, էջ 174:

<sup>32</sup> Մեբեոս, էջ 137:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Գաղանկատուացի, էջ 176:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>36</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 308-309:

համաձայնեցնում էր հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունու հետ: Վերջինս, համադրելով ուժերի հարաբերակցությունը, 652 թ. մեկնեց Դամասկոս, որտեղ Ասորիքի ու Միջագետքի արաբ կուսակալ Մուավիան «իշխանությունն էտ նմա զՀայս և զՎիրս և զԱդուանս և զՍիննիս, մինչև ցԿապկոռ և ցՊահահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ աճել զերկիրն զայն ի ծառայութիւն»<sup>37</sup>, քանի որ արաբներն էլ էին հասկացել, որ Այսրկովկասում իրական ուժ է Հայաստանը: Բյուզանդիան չէր ցանկանում Այսրկովկասում զիջել իր դիրքերը, և ունենալով Ներսես III Տայեցի կաթողիկոսի և հայ բյուզանդասեր նախարարների օժանդակությունը՝ Կոստանդ կայսրը մեծաթիվ զորքով արշավում է Հայաստան՝ Թեոդորոս Ռշտունու հետ Աղվանից և Վրաց երկրների ունեցած դաշնակցությունը խզելու համար: Անհանգստացած Ջուանշիրը 653 թ. Կարին քաղաքում ներկայանում է կայսրին: Վերջինս նրան շնորհում է «պոռտոն պատրիկի»<sup>38</sup> կոչում և իրավունք է տալիս «արևելեայցս ամենեցուն արքայաբար առնել տեսչութիւն»<sup>39</sup>: Սակայն ինչքան էլ կայսրը փորձեր սիրաշահել Ջուանշիրին և նրան կոչումներ շնորհել, այնուամենայնիվ, վերջինս Թեոդորոս Ռշտունուց կախյալ վիճակում էր, քանի որ այդ ժամանակ իրական ուժ ներկայացնող Արաբական խալիֆայությունը հայոց սպարապետին էր հանձնել տարածաշրջանի ամբողջ իշխանությունը:

Արաբները, որոնք ուշիուշով հետևում էին բյուզանդացիների քայլերին, 654 թ. զարնանը երկու ուղղություններով արշավեցին Աղվանք, Հայաստան և Վիրք՝ վերջնականապես հնազանդեցնելու նրանց: 680 թ. Երուսաղեմում Մուավիայի<sup>40</sup> հրամանով խալիֆ հրռչակված Սալման իբն Ռաբիսան ներխուժեց Առան ու գրավեց Բայլականը, ապա արաբական հեծելազորը շարժվեց Պարտավ, որի բնակիչները դիմեցին ինքնապաշտպանության, սակայն, ի վերջո, ստիպված եղան անձնատուր լինել: Դրանից հետո արաբներն արշավեցին Շակաշեն, Մեծ Կուենք, Մեծ Իրանք, Ուտի, Տրի և Բադասական: Գրավելով Հայոց Արևելից կողմանց գավառները՝ Սալմանի բանակն անցավ Կուրը և արշավելով հյուսիս՝ գրավեց Կապադակը<sup>41</sup>: Սալմանի հետ, հարկ վճարելու պայմանով, հաշտություն կնքեցին Շաքքանի (Շաքե) և Կամիրարանի (Կամրեճան) տերերը<sup>42</sup>: Եվ վերջապես հասնելով Դերբենդ՝ արաբները շարժվեցին խազարների վրա, սակայն Բալանջար գետի այն կողմում պարտություն կրեցին: Սպանվեցին թե՛ Սալման իբն Ռաբիսան և թե՛ 4 հազար զինվորներ<sup>43</sup>: Այնուամենայնիվ, Սալմանը կարողացավ գրավել նախկին մարզպանական Աղվանք-Առանի ամբողջ տարածքը: Սակայն արաբները այս արշավանքով չեն կարողանում վերջնականապես

<sup>37</sup> Սեբեոս, էջ 169:

<sup>38</sup> Կադանկատուացի, էջ 182:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>40</sup> Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Ե., 1996, էջ 91:

<sup>41</sup> Баладзори, նշվ. աշխ., էջ 13:

<sup>42</sup> Եղիազարյան Ա., Հաբիբ Իբն Մաւլամայի և Սալման Իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ (Լրաբեր, 2008, N 2, էջ 75):

<sup>43</sup> Նույն տեղում:

հնագանդեցնել Հայոց Արևելից կողմերը և սրանց հարակից շրջանները, քանի որ զբաղված էին նորանոր նվաճումներով և Բյուզանդիայի հետ շարունակվող անընդհատ պատերազմներով:

Ջուանշիրը, տեսնելով, որ Արաբական խալիֆայությունը բռնել է հզորացման ուղին, իսկ Բյուզանդիան չի կարող իրեն նեցուկ դառնալ, մեծամեծ նվերներով 667 թ. ուղևորվում է Դամասկոս, խալիֆ Մուավիայի (660-680 թթ.) մոտ՝ տալով հպատակության երդում: Վերադարձի ճանապարհին Ջուանշիրն Արուճում ներկայանում է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին (661-685 թթ.) ու Անաստաս կաթողիկոսին՝ հավանաբար խալիֆի հետ բանակցությունների մասին զեկուցելու համար:

Այսպիսով՝ Հայոց Արևելից կողմերը, սուկ հարկերի վճարումով կարողանում էր պահպանել երկրի պետական կառավարման ներքին համակարգը: Իսկ Ջուանշիրի ժամանակ Ուտիքն ու Արցախը բռնում են շենացման ու բարգավաճման ուղին:

**ИСТОРИЧЕСКИЕ СОБЫТИЯ В  
ВОСТОЧНОЙ ОБЛАСТИ АРМЕНИИ (VI-VII вв.)**

ВАРДАНЯН А. М.

**Резюме**

Восточная часть Армении, в частности, армянские области Утик и Арцах в VI-VII вв. подверглись как персидско-византийскому, так и хазаро-арабскому нашествиям. На протяжении многих лет хазары учиняли разбои и грабежи в армянских областях. Но в VI-VII вв. правителям Утика и Арцаха удавалось сохранить внутреннюю независимость и вместе с другими армянскими княжествами противостоять арабской угрозе. В результате сво-ей гибкой политики представители династии Араншахигов и Мигранидов сумели выстоять в сложившейся ситуации, имея при этом минимальные потери, и уже в VIII в. они являлись самостоятельным княжеством.